Նորընտիր Խորհրդարանի բացումը տեղի ունեցաւ օգոստոս 1-ին։ Բացումից դեռ շատ առաջ Խորհրդարանի շէնքում տիրում էր եռ ու զեռ։ Կուսակցական ֆրակցիաները կատարում էին նախապատրաստական աշխատանքներ։ Բոլորի ուշադրութիւնը, բնական կերպով, կենտրոնացած էր դաշնակցական ֆրակցիայի վրա, որ ամէն օր զումարում էր երկարատև նիստեր, ուր քննութեան էին առնւում բազմաթիւ ընդհանուր-սկզբունքային և ընթացիկ-գործնական հարցեր։ Ամենից շատ զբաղեցնող խնդիրը երկրի ներսը և ճակատներում ստեղծուած լարուած դրութիւնն էր, որի մեղմացման համար մտածւում էին մի շարք միջոցներ։

Այդ խորհրդակցութիւնների ժամանակ լուծուեց և ֆրակցիայի ու կառավարութեան փոխյարաբերութեան հարցը. վարչապետը նշանակուելու էր ֆրակցիայից՝ կուսակցական բարձրագոյն մարմնի հաւանութեամբ. կառավարութիւնը պէտք է լինէր պատասխանատու Խորհրդարանի և ֆրակցիայի առջև. ֆրակցիան իր հրահանգները պիտի ստանար կուսակցութեան բարձրագոյն մարմնից։ Նշանակուեցին թեկնածուներ Խորհրդարանի նախագահութեան հինգ անդամների — մէկ նախագահ, երկու փոխ-նախագահ, աւագ ու կրտսեր քարտուղարներ։ Քննուեց և հաստատուեց կառավարութեան յայտարարութեան նախագիծը, որից յետոյ որոշուեցին վարչապետութեան և նախարարութեան թեկնածուները։ Կառավարութեան վերակազմութիւնը յանձնարարուեց Ա. Խատիսեանին, որը իր հրաւիրելիք նախարարների ցանկը պիտի ներկայացնէր ֆրակցիային ի հաստատութիւն։ Կազմուեց խորհրդարանական ֆրակցիայի նախագահութիւն՝ Ա. Զամալեան, Վ. Խորէնի և Ս. Վրացեան։

Բացումը եղաւ հանդիսաւոր, Խորհրդարանի աւագ անդամ Ա. Սահակեանի նախագահութեամբ, նախարարական ամբողջ կազմի, օտար ներկայացուցիչների և բազմաթիւ հիւրերի ու հանդիսականների մասնակցութեամբ։ Խորհրդարանի դահլիճը ենթարկուած էր հիմնական վերանորոգման և զարդարուած էր դրօշակներով ու գորգերով։

Ա. Սահակեանի բացման հակիրճ ճառը ընդմիջւում էր բուռն ծափահարութիւններով։ «Բաղաքացիներ, Միացեալ Հայաստանի ներկայացուցիչներ, ոկսեց նա, ուղիղ մի տարի սրանից առաջ, օգոստ. 1-ին, մեր երկիրը շրջապատուած էր տաճկական զօրքերի երկաթէ օղակով, թշնամու սուրը կախուած էր մեր գլխին, մեր հայրենիքը դարձել էր բանտ։ Ես, որպէս նախագահ դերագոյն Ազգային Խորհրդի, առաջին նիստին, անխախտ հաւատով և խորը համոզմունքով յայտարարեցի, որ մեր Հանրապետութեան նեղ հորիզոնը, որի սահմանները խեղդում էին նրան, պէտք է ընդարձակուի, մեր հերոս ու մարտիրոս ժողովուրդը պէտք է լինի տէրը իր վայելչայած ու գուրգուրած հայրենիքի (ծափեր)։ Այսօր երջանիկ եմ վկայելու, որ իմ գուշակութիւնը ոչ միայն արդէն կատարուած փաստ և իրականութիւն է դարձել, այլ և մեր ժողովրդի կամքը սրբազան, հայութեան երկու կէսերը գրկարաց միացել են և յայտարարել մի պետութիւն, միացեալ, անկախ և ազատ Հայաստան, որի պաշտպանութեան համար մենք երդուել ենք զոհել մեր կեանքը և կուել մինչև վերջին շունչ (ծափեր)։ Մենք հպարտանում ենք մեր նորածին պետութեամբ. նա թոյլ է, հեռու է կատարեալ լինելուց,